Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 524 - Ա
որոշման

«ԱՐՏԱՎԱԶ-ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Փյունիկ բնակավայրում կամրջի վերակառուցումը ուղղակիորեն կապահովի երեխաների հասանելիությունը «Շին Շողիկ» ճամբար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն (ԱՄՆ, Նյու Ջերսի, Փարամուս, 31 Ուեսթ Սենչյուրի Ռոուդ)
4.	Ծրագիրը կատարողը	Ամերիկայի հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ (ՀՎՀՀ՝ 00032803, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Նիկոլ Դուման 22, գործունեության հասցե՝ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 18)
5.	Ծրագրի իրականացման վայրը, բնագավառը	Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ-Փյունիկ բնակավայր, ճանապարհաշի-նության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	200,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2028 թվականի հունիսի 1-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) կամրջի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը՝ 8,000,000 դրամի չափով. 2) կամրջի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2028 թվականի հունիսի 1-ը՝ 192,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կամրջի վերակառուցման նախագծանախահաշվային փաթեթի պատվիրում՝ 8,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի. 2) կամրջի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 192,000,000 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

19.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ